ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

- Վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 224/2 սենյակ
- Օրը՝ 05.12.2018թ.
- Ժամը՝ 12:00

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Ս.Փիրոյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի առաջին տեղ զբաղեցնող բոլոր մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Հադրութ -1» ՍՊԸ-ի:

«Հադրութ -1» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված չափը:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող «Հադրութ -1» ՍՊԸ-ի հայտը՝ համաձայն Կարգի 44-րդ կետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Ս.Փիրոյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունված որոշումը՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «Գալիմա» ՍՊԸ-ն /2-րդ տեղ զբաղեցրած մասնակից/:

2.2 Ծանուցում ուղարկել «Գալիմա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում նշված չափաբաժնի մասով նույնպես ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

2.3 Հանձնաժողովի նիստը ընդհատել մինչև 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի վերջնական գնահատումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	*Ս.Փիրոյան*	
Հանձնաժողովի անդամներ՝	*Է.Գրիգորյան*	
	Հ.Հարությունյան	
	Լ.Բաղդասարյան	
	Լ.Արտաշեսյան	
Հանձնաժողովի քարտուղար՝	*Ա. Համբարձումյան*	